Հայաստան

2020 թ. հոկտեմբերի 1-31

Սեպտեմբերի 27-ին **Լեռնային Ղարաբաղի** (ԼՂ) շփման գծի երկայնքով ծայր առած բախումները հանգեցրին խաղաղ բնակչության շրջանում բազում մահերի՝ հարկադրելով տասնյակ հազարների իրենց տները լքել:

Թեեւ Կառավարությունից **աջակցության որեւէ պաշտոնական դիմում չի ստացվել,** սակայն ՄԱԿ ՓԳՀ/ ՄԱԿ-ի հայաստանյան թիմը լիազորվել էր մարդասիրական օժանդակություն տրամադրելու: երկրի 10 քաղաքապետարաններին:

Առ հոկտեմբերի 27-ը՝ ՄԱԿ ՓԳՀ-ն իր գործընկերների հետ համագործակցությամբ իրականացրել է 10 այցելություն՝ **ինքնաբուխ ժամանած անձանց կարիքների** արդյունավետ բավարարմանը պատրաստվելու նպատակով:

90,000 տեղահանված անձ*

ԼՂ բնակչության 60%-ը

Ինքնաբուխ ժամանել են Հայաստան եւ տեղահանվել են ԼՂ սահմաններում

* Տեղեկությունները վերցվել են ՀՀ ԱԳՆ-ից

Կանայք, երեխաները եւ տարեցները

կազմում են ժամանողների մեծամասնությունը:

Ոչ պարենային ապրանքների (ՈՊԱ) ձեռքբերում 10,000

ինքնաբուխ ժամանած անձանց համար եւ դրանց տրամադրում համայնքապետարաններին

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պաշտպանության հարցերով աշխատանքային խումբը, որը նախագահում է ՄԱԿ ՓԳՀ-ն, ներառում է քաղաքացիական հասարակությունը եւ ՄԱԿ-ը ներկայացնող 24 կազմակերպություն:

Պաշտպանությանն առնչվող հիմնական մտահոգությունները ներառում են՝

(i) հոգեկան առողջության եւ սոցիալ-հոգեբանական աջակցության կարիքներ՝ ինքնաբուխ ժամանածների շրջանում, (ii) փաստաթղթերի բացակայության հետ կապված խնդիրներ, (iii) կրթության լիարժեք հասանելիություն, (iv) հասանելի ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների պակաս:

© Երեխաները ժամանակավոր կայանման կենտրոնում պահմտոցի են խաղում: Լուսանկարը՝ Անահիտ Հայրապետյանի, ՄԱԿ ՓԳՀ

ԿԱՑԱՐԱՆ ԵՎ ՈՊԱ-ՆԵՐ

Կացարանի եւ ՈՊԱ-ների հարցերով աշխատանքային խումբը, որը նախագահում է ՄԱԿ ՓԳՀ-ն, համակարգում է ինքնաբուխ ժամանողների կացարանին եւ հիմնական կարիքներին առնչվող աշխատանքները:

Ոլորտում բացահայտվել են հետեւյալ հիմնական խնդիրները. (i) ձմռան հետ կապված մտահոգություններ, ներառյալ տաք հագուստների եւ վարձավճարների փոխհատուցման կարիքների, (ii) կացարանների գերբնակեցում, (iii) օթեւաններում տեղավորելու կարողությունների բացակայություն համայնքային մակարդակում:

Կարեւոր գործընթացներ

- **Կառավարությունը** Լեռնային Ղարաբաղից ինքնաբուխ ժամանումների դեպքում աջակցության տրամադրման պատասխանատվություն է ստանձնել եւ կացարանի ու աջակցության տեղաբաշխման պատասխանատվությունը պատվիրակել է տեղական ինքնակառավարման մարմիններին:
- Կառավարությունը ՄԱԿ-ի թիմին ուղղորդել է համալրելու **10 ընտրված համայնքներում** տրամադրվող աջակցությունը՝ Էջմիածին, Դիլիջան, Հրազդան, Եղեգնաձոր, Ջերմուկ, Կապան, Սիսիան, Գորիս, Մարտունի եւ Ռանչպար: Համայնքապետարանների կողմից ի սկզբանե նախանշված կարիքները հիմնականում վերաբերում են պարենային, ոչ պարենային ապրանքներին (ներառյալ՝ հիգիենայի պարագաներ, ջեռուցիչներ, անձնական պաշտպանության սարքավորումներ, դպրոցական նյութեր եւ տեխնոլոգիական գործիքներ), առողջապահական ծառայություններին եւ դեղամիջոցներին, կրթությանն ու սոցիալ-հոգեբանական աջակցությանը, հատկապես երեխաներին:
- **Աշխատանքային խմբեր.** ՄԱԿ-ի մակարդակով համակարգումը հիմնականում իրականացվում է աշխատանքային խմբերի միջոցով: Գործում են հետեւյալ ԱԽ-ները. պաշտպանություն (ղեկավարում է ՄԱԿ ՓԳՀ-ն, Երեխաների պաշտպանության եւ կրթության հարցերով ենթախմբեր, որոնք նախագահում է ՅՈՒՆԻՍԵՖ-ը), կացարան եւ ՈՊԱ (ղեկավարում է ՄԱԿ ՓԳՀ-ն, դրամական աջակցության հարցերով ենթախմբեր, որոնք համանախագահում են ՅՈՒՆԻՍԵՖ-ը եւ ՄԱԿ ՓԳՀ-ն են), պարենային անվտանգություն եւ սնուցում (ղեկավարում է ՊՀԾ-ն, ենթախումբը նախագահում է ՅՈՒՆԻՍԵՖ-ը) եւ առողջապահություն (ղեկավարում է ԱՀԿ-ն): Բոլոր ԱԽ-ներում ՄԱԶԾ-ի ղեկավարությամբ իրականացվում են վաղ վերականգնմանն ուղղված աշխատանքներ:

Ֆինանսական տեղեկություններ

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է աշխատանքների ընթացքում նվիրատուների տրամադրած կենսական նշանակության աջակցության համար, ինչպես նաեւ նրանց, ովքեր նպաստել են ՄԱԿ ՓԳՀ ծրագրերին:

Ամերիկայի Միացյալ Նահանգներ | Գերմանիա | Միացյալ Թագավորություն | Դանիա | Ճապոնիա | Շվեյցարիա | Ֆրանսիա | Իտալիա | Շվեդիա | Իռլանդիա | Նորվեգիա | Նիդեռլանդներ | մասնավոր դոնորներ |

Կոնտակտային տվյալներ

Անահիտ Հայրապետյան, արտաքին կապերի համակարգող, ՄԱԿ ՓԳՀ
ՄԱԿ-ի գրասենյակ, Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Պետրոս Ադամյանի փողոց, շենք 14
ARMYE@UNHCR.ORG | FACEBOOK | +37410 545 935 (105)